

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի
առաջարկությունները Մարդու իրավունքների պաշտպանության ազգային
ռազմավարության միջոցառումների Ցանկի վերաբերյալ:

**1. Կյանքի իրավունքի վերաբերյալ 1-ին գլուխը լրացնել հետևյալ
գործողություններով՝**

*1. Ապահովել կյանքի իրավունքի պաշտպանությունը փակ և կիսափակ
հաստատություններում (քրեակատարողական հիմնարկներում, հոգեբուժական
հաստատություններում, ծերանոցներում, մանկատներում):*

1.1 Ապահովել փակ հաստատություններում մահացությունների դեպքերի
պատշաճ քննությունը:

1.2 Ապահովել, որպեսզի համապատասխան գերատեսչությունները
(Արդարադատության նախարարությունը, Առողջապահության նախարարությունը,
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը) ներկայացնեն տարեկան
հաշվետվությունը քրեակատարողական հիմնարկներում մահացության դեպքերի, այդ
դեպքերի հանգամանքների, քննության վերաբերյալ, նաև այն մասին, թե ինչ
համակարգային խնդիրներ են հայտնաբերվել մարդու իրավունքների ոլորտում տվյալ
գերատեսչության գործունեության մեջ և ինչ քայլեր են ձեռնարկվում այդ
հանգամանքների վերացման ուղղությամբ:

**2. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ 16-րդ
գլուխը լրացնել հետևյալ գործողություններով՝**

*1. Իրականացնել օրենսդրական բարեփոխումներ սոցիալ-հոգեբանական
հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության նպատակով:*

¹ Չափազանց կարևոր ենք համարում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների
պաշտպանության շրջանակներում մասնավորապես սոցիալ-հոգեբանական և մտավոր
հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված առանձին
գործողությունների ներառումը ՄՈԻ պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների
ցանկում: 2010 թ. ՀՀ կողմից վավերացվել է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին
ՄԱԿ-ի կոնվենցիան, համաձայն որի հաշմանդամություն ունեցող են համարվում նաև այն անձինք, որոնք
տևական ժամանակ տառապում են հոգեկան, մտավոր և նյարդային հիվանդություններով, որոնք տարբեր
արգելքների հետ փոխազդեցության արդյունքում կարող են խոչընդոտել, որ նրանք լիակատար և
արդյունավետ մասնակցեն հասարակական կյանքին մյուսների հետ հավասար հիմունքներով: Մինչդեռ,
ինչպես ցույց է տալիս փորձը որպես կանոն հիմնական ուշադրությունը դարձվում է հենաշարժողական
խնդիրներ ունեցող անձանց, երբ Կոնվենցիան բոլորովին նոր և հեղափոխական մոտեցումներ է
սահմանում մասնավորապես սոցիալ-հոգեբանական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց
համար:

1.1. Հայաստանի Հանրապետության հոգեկան առողջության ոլորտի իրավական ակտերի և միջազգային ստադարտների, մասնավորապես՝ «Հաշմանդամների իրավունքների պաշտպանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի համեմատական վերլուծության իրականացում և ՀՀ օրենսդրության մեջ համապատասխան փոփոխությունների ու լրացումների կատարում:

1.2. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրության վավերացում:

1.3. Սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց մարդու իրավունքների խախտումներով զբաղվելու պաշտոնական լիազորությամբ օժտված իրավասու մարմնի ստեղծում:

1.4. Հայաստանի Հանրապետությունում սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց համայնքային ծառայությունների տրամադրման մեխանիզմների օրենսդրական կարգավորումների մշակում և ընդունում:

1.5. Հոգեբուժական ծառայություններից օգտվող և օգտված անձանց, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավում ոլորտում քաղաքականության մշակման և օրենսդրական բարեփոխումների իրականացման գործընթացում:

1.6. Սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց համայնքի կյանքին ներգրավելու համար համապատասխան օրենսդրական կարգավորումների մշակում և ընդունում, մասնավորապես ապահովելով հավասար հնարավորություններ կրթության, աշխատանքի, ժամանցի և այլ ոլորտներում:

2. *Իրականացնել կառուցվածքային բարեփոխումներ սոցիալ-հոգեբանական, մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության նպատակով:*

2.1. Համայնքահեն ծառայությունների ներդրման համար ռազմավարական ծրագրի մշակում:

3. *Իրականացնել կրթական բարեփոխումներ սոցիալ-հոգեբանական, մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության նպատակով:*

3.1. Համայնքահեն խնամքի և հասարակական աջակցության ապահովման նպատակով անհրաժեշտ ուսումնասիրության իրականացում և դրան համապատասխան մասնագետների պատրաստում, վերապատրաստում:

3.2. Սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց համար կարողությունների զարգացմանն ու ինքնուրույնության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում հասարակական կյանքում նրանց լիարժեքորեն ներգրավման նպատակով՝ հաշվի առնելով յուրաքանչյուր անձի անհատական կարիքները:

4. Հոգեկան առողջության պահպանմանն ու սոցիալ-հոգեբանական, մտավոր հաշմանդամության նկատմամբ հասարակական կարծիքի ձևավորմանն ուղղված բարեփոխումներ

4.1. Մարդու իրավունքների դասընթացների կազմակերպում և իրականացում սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց համար, ինչպես նաև բուժաշխատակիցների, սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց խնամք իրականացնողների, հարազատների, լրագրողների, գործատուների համար, որոնք ուղղված կլինեն սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց արժանապատվության, ինքնուրույնության պահպանմանը և կարճազանքեն նրանց կարիքներին:

4.2. Հոգեկան առողջության վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խարանի և խտրականության վերացման նպատակով:

4.3. Հոգեկան բարեկեցության ու առողջության և դրա վրա ազդող գործոնների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում քաղաքացիների լայն շերտերի և թիրախ խմբերի շրջանակներում՝ երեխաներ, դեռահասներ, տարեցներ, կանայք, այդ թվում՝ նախաձննդյան և հետձննդյան բժշկական օգնության ընթացքում, թմրամիջոցներից, ալկոհոլից և այլ կախվածություն ունեցող անձինք, տևական բուժում պահանջող կամ մահացու հիվանդություններով տառապող ու նրանց խնամող անձինք և այլն:

3. Ընտրական իրավունքների վերաբերյալ 9-րդ գլուխը լրացնել հետևյալ գործողություններով՝

1. Ընտրական օրենսգրքում կատարել փոփոխություն, որով կապահովվի ազատագրկման դատապարտված և քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող քաղաքացիների ընտրական իրավունքը:

2. Կատարել ուսումնասիրություններ և ձեռնարկել քայլեր ընտրական գործընթացի կազմակերպմանը ներգրավված վարչական մարմինների քաղաքական անկախության ապահովման ուղղությամբ:

4. Արդար դատաբնության իրավունքի վերաբերյալ 22-րդ գլուխը լրացնել հետևյալ գործողություններով՝

3. Ընդլայնել քրեական գործերի շրջանակներում անվճար իրավաբանական օգնության հնարավորությունը, մասնավորապես՝

1.1. Սահմանել անվճարունակ և խոցելի խմբերին դասվող վկաների համար հանրային պաշտպանի ծառայությունից օգտվելու հնարավորությունը:

1.2. Սահմանել թմրամիջոց գործածող անձանց որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավվելու դեպքում պետական միջոցների հաշվին իրավաբանական օժանդակության տրամադրման հնարավորությունը:

4. Սահմանել լրացուցիչ երաշխիքներ ՀՀ քննչական և ոստիկանության ծառայությունների կողմից անձի իրավունքների պաշտպանության նպատակով: Մասնավորապես՝

1.1. ՀՀ ոստիկանության և քննչական բոլոր բաժիններում ապահովել անձանց մուտքի և ելքի գրանցումը:

1.2. Սահմանել վկային իր գտնվելու վայրում հարցաքննության նվազագույն պայմանները:

1.3. Բոլոր քննչական բաժինները ապահովել հարցաքննության համար նախատեսված հատուկ սենյակներով, որոնք հնարավորություն կտան հարցաքննության տեսաձայնագրումը, որը /ձայնագրությունը/ իր հերթին կկցվի հարցաքննության արձանագրությանը: Անհնարության դեպքում ապահովել վկային իր հարցաքննության տեսաձայնագրման իրավունքով:

1.4. Ապահովել իրավապահ մարմինների համար նյութատեխնիկական բավարար ռեսուրսների առայությունը:

1.5. Ապահովել որպեսզի իրավապահ մարմինների ծառայողները կրեն համապատասխան համազգեստ, որի վրա դաջված կլինի ծառայողի նույնականացման համարը, իսկ քաղաքացիների հետ շփման մեջ մտնելիս ներկայանան և ներկայացնեն վկայական:

1.6. Ապահովել ծանուցագրով վկայի հարցաքննության կանչելու մեխանիզմի, վկաների՝ իրարից անջատ հարցաքննելու սկզբունքի պատշաճ կիրառումը:

5. Ապահովել դատական փորձաքննությունների իրականացման ապակենտրոնացումը /ոչ միայն Երևանում այլ նաև պետության մյուս համայնքներում/:

6. Ապահովել քրեական վարույթի մասնակիցների հանդեպ անվտանգության միջոցների կիրառումը բոլոր անհրաժեշտ դեպքերում:

5. Անձնական անձեռնամխելիության և ազատության իրավունքի վերաբերյալ 23-րդ գլուխը լրացնել հետևյալ գործողությունով՝

1. Միջոցներ ձեռնարկել ձերանոցների, օտարերկրացիների պահման համար նախատեսված հատուկ կացարաններում մշտադիտարկման խմբերի ստեղծման ուղղությամբ:

6. Միջոցառումների ցանկը լրացնել նոր Գլխով՝ «Ձինձառայողների և գորակոչիկների իրավունքներ» վերնագրով, որը կներառի հետևյալ գործողությունները՝

1. Ապահովել գորակոչիկների և զինձառայողների իրավունքները և պարտականությունները կարգավորող օրենսդրության բարեփոխումները

1.1. Ապահովել գորակոչիկների եւ զինձառայողների իրավունքների վերաբերյալ բոլոր ենթաօրենսդրական ակտերի, նրանցում կատարվող փոփոխությունների վերաբերյալ հանրային մատչելիությունը:

1.2. Ամրագրել գորակոչիկին նրա առողջական վիճակի ուսումնասիրության վերաբերյալ բժշկական զննության եզրակացության մասին ակտի պարտադիր տրամադրումը՝ անկախ նրա դիմումի առկայությունից:

1.3. Զորակոչիկի առողջական վիճակի ուսումնասիրության վերաբերյալ բժշկական եզրակացության ակտում որպես պարտադիր պայման ներառել զինվորական ծառայությանը բնորոշ ծանրաբեռնվածության պայմաններում նրա առողջական վիճակի հնարավոր զարգացումների վերաբերյալ կանխատեսումների գրառումը:

1.4. Ամրագրել գորացրումից առաջ զինձառայողների առողջական վիճակի պարտադիր բժշկական զննության անցկացումը եւ եզրափակիչ ակտի պարտադիր տրամադրումը զինձառայողին եւ նրա հարազատին:

1.5. Սահմանել առողջական խնդիրների հետեւանքով վաղաժամկետ գորացրված զինձառայողների առողջական, սոցիալական լուծման արժանապատիվ եւ համարժեք նյութական եւ բարոյական փոխհատուցման իրավունքը:

1.6. Սահմանել առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ գորացրված անձանց պաշտպանական գերատեսչության կողմից տրամադրվող փաստաթղթերի 7-օրյա ժամկետ:

1.7. Ընդունել «Անհայտ կորած անձանց մասին» ՀՀ օրենքը:

2. Ապահովել գորակոչիկների և զինձառայողների իրավունքները և պարտականությունները կարգավորող օրենսդրության պատշաճ կիրառումը

2.1. Ապահովել շարային ծառայությանը ոչ շարային եւ սահմանափակումներով ծառայությանը պիտանի ճանաչված զինձառայողների ներգրավումը բացառող, կանխարգելող անկախ վերահսկողական մեխանիզմ:

2.2. Ապահովել գորակոչիկների եւ զինձառայողների պարտադիր համալիր բժշկական զննությունը՝ անկախ գանգատների առկայությունից:

2.3. Հրապարակել ՀՀ ԶՈՒ զինձառայողներին տրամադրվող բժշկական ծառայության տրամադրման վիճակի, խնդիրների եւ ձեռնարկված միջոցառումների մասին ՀՀ պաշտպանության նախարարի տարեկան զեկույց:

2.4. Իրականացնել զինձառայության հետ կապված առողջական խնդիրների ծագման պատճառների ուսումնասիրություն անկախ բժշկական հանձնաժողովի կողմից:

3. Ապահովել Ձինված ուժերում մարդու իրավունքների վիճակի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների ներդրումը և ամրապնդումը

3.1. Մշակել և ընդունել «ՀՀ զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական, քաղաքացիական և հասարակական վերահսկողության մեխանիզմների մասին» ՀՀ օրենք:

3.2. Համապատասխանեցնել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը ՄԴ թիվ 2012 թ. մարտի 6- թիվ ՄԴՈ-1010 որոշմանը:

3.3. Մշակել և որպես պարտադիր տեղեկատվություն հրապարակել ՊՆ կողմից ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների մասին հաշվետվությունը:

3.4. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքով սահմանել ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի մասին տարեկան թեմատիկ զեկույցի հրապարակում մինչև ՀՀ ռազմական օմբուդսմենի հիմնադրումը ըստ ԵԽԽԿՎ 1742 (2006) հանձնարարականի:

3.5. Գաղտնագրերով ՀՀ պաշտպանական բյուջեի ոչ ռազմական հատվածը՝ նախագծման, պլանավորման, ընդունման, իրացման և մյուս բոլոր փուլերում:

3.6. Ներդնել Ռազմական օմբուդսմենի ինստիտուտը:

3.7. Ապահովել զինված ուժերում մահացության դեպքերի պատշաճ քննությունը և թույլատրելի սահմաններում տեղեկատվության թափանցիկությունը:

7. Միջոցառումների ցանկը լրացնել նոր գլխով՝ «Մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր մեխանիզմները» վերնագրով, որը կներառի հետևյալ գործողությունները՝

1. Ապահովել ՀՀ յուրաքանչյուր նախարարության և ՀՀ Կառավարությանը կից մարմինների կողմից մարդու իրավունքների վիճակի և մարդու իրավունքների վիճակի բարելավման ուղղությամբ իրականացված գործողությունների վերաբերյալ տարեկան հաշվետվությունների ներկայացումը ԱԺ-ին:

2. Ներդնել փաստաբանների կողմից Pro bono հիմունքներով անձանց իրավունքների պաշտպանության խթանող մեխանիզմներ:

3. Սահմանել հանրային շահի պաշտպանության նպատակով հայցի հարուցման և ՀԿ-ների կողմից /առանց փաստաբանի օժանդակության/ դատարանում ներկայացուցչության իրականացման մեխանիզմները:

4. Ապահովել ՀՀ Փաստաբանակ պալատի Հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբանների նեղ մասնագիտական /ըստ գործունեության ոլորտների/ վերապատրաստումները:

8. Միջոցառումների ցանկը լրացնել նոր գլխով՝ «Իրավապաշտպանական գործությամբ զբաղվող անձանց և կազմակերպությունների իրավունքները»

1. Իրականացնել ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանների հարցերով հատուկ զեկուցողի առաջարկությունները, որոնք հրապարակվել են 2010թ. Հայաստան կատարած նրա այցից հետո:

2. Ապահովել իրավապաշտպանների պաշտպանությունը, հատկապես նրանց, ովքեր պաշտպանում են խոցելի խմբերի իրավունքները, օրինակ ԼԳԲՏ անձանց իրավունքները:

3. Վերանայել փաստաբանների գործունեության վերաբերյալ օրենքը՝ ապահովելով, որպեսզի ոչ փաստաբանները կարողանան մարդու իրավունքների խախտումներից տուժողների շահերը ներկայացնել դատարանում:

4. Ապահովել, որ իրավապաշտպանների նկատմամբ զրպարտության ու վարկաբեկման դեպքերը քննվեն արդյունավետ և թափանցիկ կերպով:

5. Անցկացնել իրավապաշտպանների իրավունքների խախտման և նրանց գործունեության սահմանափակման բոլոր դեպքերի անաչառ, թափանցիկ և արդյունավետ քննություն, ապահովել, որ այդ քննությունները կատարվեն անկախ մարմնի կողմից:

6. Կազմակերպել հանդիպումներ և երկխոսություններ տարբեր հասարակական կազմակերպությունների հետ, որոնք աշխատում են մարդու իրավունքների զանազան հարցերի ուղղությամբ՝ նաև մարզերում՝ բարձրացնելու պաշտոնատար անձանց իրազեկվածությունը մարդու իրավունքների միջազգային չափանիշների, այդ չափանիշների իրականացման և դրանց կիրառման մեխանիզմների վերաբերյալ:

7. Սահմանել Իրավապաշտպանների և իրավապաշտպանական գործունեություն ծավալող կազմակերպությունների համար հանրային հեռուստատեսությամբ անվճար էթերաժամից օգտվելու հնարավորություն:

8. Միջոցառումների ցանկը լրացնել նոր գլխով՝ Ծրագրի իրականացման հանդեպ մոնիթորինգ և գնահատում

1.1. Ապահովել ծրագրի իրականացման մոնիթորինգ և տարեկան հաշվետվությունների պատրաստում:

1.2. Ապահովել ծրագրի միջոցառումների իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունների հրապարակայնացումը